

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1988 թվականի հոկտեմբերի 26-են մինչև 29-ը Հռոմի Ս. Էջիտիո հիմնարկի կազմակերպությամբ տեղի ունեցավ Խաղաղության Միջազգային Բ հանդիպումը՝ «Աղոթքի մարդիկ խաղաղության փնտռտուքի մեջ» ընդհանուր թեմայով:

Քրիստոնեական Եկեղեցիներու քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական ընտանիքները, բողոքական եկեղեցական համայնքները իրենց գրեթե բոլոր ճյուղավորումներով կմասնակցեին հանդիպումին: Ներկայացուցիչներ ղրկեր էին նաև այլ գլխավոր հաստատություններ՝ ԵՀԽ, ԵԵԽ և ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Բազում պետություններ բարձր մակարդակի վրա կմասնակցեին հանդիպումին՝ գլխավորությամբ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի Հռոմի ավագ դեսպաններուն:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիեն ներկա էր Կ. Պոլսո հայոց Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությանց վարիչ և Իշխանաց կղզիներու տեսուչ գերաշնորհ Տ. Մեսրոպ եպս. Մութաֆյան:

Ըստ հայտագրի, տեղի ունեցան ինը գիտաժողովներ, որոնց ընթացքին կարդացվեցան երեսուներկու զեկուցումներ: «Արեվելյան Եկեղեցիներու խաղաղության ուսուցումը» կոչված նիստին Տ. Մեսրոպ եպս. Մութաֆյան զեկուցեց Ս. Գրիգոր Նարեկացիի գրականության մեջ ներքին խաղաղության դրսևորումներուն մասին պատշաճ մեջբերումներով Նարեկ Աղոթամատյանեն:

Խաղաղության Միջազգային Բ հանդիպումի մասնակիցները առիթը ունեցան պաշտոնական բարձրաստիճան հանդիպումներու:

Հոկտեմբերի 28-ին, երեկոյան ժամը 19-ին, Սանթա Մարիա տի Թրասթեվերե բազիլիկայի մեջ տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք, որուն հաջորդեց միջկրոնական տպավորիչ բացօթյա արարողություն Սանթա Մարիա հրապարակին մեջ, ուր ավելի քան 7.000 հոգինոց բազմություն մը մասնակից դարձավ աղոթքներուն:

Միջազգային հանդիպումը վերջ գտավ 29 հոկտեմբերի կիրակամուտին, երբ հանդիպումի մասնակիցները ընդունվեցան Հռոմի Եպիսկոպոս Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի կողմե: Հանուն հանդիպումի ներկայացուցիչներուն ողջույնի ուղերձը արտասանեց Տ. Մեսրոպ եպիսկոպոսը:

30 հոկտեմբեր կիրակի կեսօրին միջազգային հանդիպումի մասին ընդարձակ տեղեկություններ տալե ետք, Հռոմի հեռուստատեսությունը գերշ. Տ. Մեսրոպ եպս. Մութաֆյանի հետ երեսուն վայրկյան տևող բովանդակալից ասուլիս մը ունեցավ, որուն ընթացքին սրբազանը հակիրճ պատմականը ըրավ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, քննական ակնարկ մը նետեց Վատիկանի Բ ժողովի էկումենիկ արտահայտությանց՝ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի և Պողոս Բ Պապի միջև 1970 թ. ստորագրված զեկուցագրին վրա: Հայտագիրը ավարտվեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի խաղաղասիրության մարզի մեջ տարած միջեկեղեցական և միջկրոնական հաստատուն աշխատանքներու վրա նետված ակնարկով:

ԹՂԹԱԿԻՑ